

Գ. Գլուխ

ՊԼՈՏԻՆՈՍ

Հնադարեան յոյն փիլիսոփայ **Պլոտինոս** (յուն.՝ Πλωτίνος, 205 – 270 թ.) կը հանդիսանայ փիլիսոփայութեան Նոր-Պլատոնական ուղղութեան հիմնադիրը եւ անոր գլխաւոր ներկայացուցիչը:

Պլոտինոս ծնած է հարաւ-եգիպտական Լիւկոպոլիս (Lykopolis, այսօր՝ Ասիւթ = արաբ.՝ أسیوط) քաղաքին մէջ: Ուսումը ստացած է Ալեքսանդրիոյ նշանաւոր դպրոցին, Museion-ի (= մուսաներու տաճար) մէջ, ուսուցիչ ունենալով դարձեալ նշանաւոր փիլիսոփայ *Ամմոնիոս Սակկաս* (յուն.՝ Ammōnios Sakkás, 175 – 242 թ.), որ կը նկատուի Նախահայրը՝ փիլիսոփայական Նոր-Պլատոնական ուղղութեան: 40 տարեկանին, Պլոտինոս փիլիսոփայական այս նոր ուղղութիւնը կը փոխադրէ Հռոմ, ուր եւ կը գործէ ամբողջ 25 տարիներ, մինչեւ իր մահը:

Մանրամասնելէ առաջ՝ *Պլոտինոսի* կեանքի զանազան հանգրուանները, ընդհանրապէս Պլոտինոսի փիլիսոփայական միտքն ու մասնաւորաբար Նոր-Պլատոնականութիւնը, փիլիսոփայի գրական վաստակն ու անոր ազդեցութիւնը հետագայ փիլիսոփայական նոր ուղիին (Նոր-Պլատոնականութեան), ինչպէս նաեւ նոր կազմակերպուող ու արագօրէն տարածուող Քրիստոնէութեան վրայ, հարկ է նախ արագ ակնարկ մը նետել Հին Դարու վերջաւորութեան վրայ, քննարկել այդ շրջանի արեւմտեան փիլիսոփայական ուղղութիւններու եւ արեւելեան կրօններու փոխադարձ ազդեցութիւնները: Արդարեւ, իւրայատուկ ժամանակաշրջան մը, որ կը կոչուի նաեւ՝ *Աստուածիմաստութեան* (յուն.՝ theosophía) *ժամանակաշրջան*:

Վերոյիշեալ ժամանակաշրջանին մասին արդէն լայնօրէն անդրադարձած ենք այս մասի թէ՛ **ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ** բաժնին մէջ (Էջ 12) եւ թէ **ՓԻԼՈՆ ԱԼԵՔՍԱՆ-ՂՐԱՏԻ** յատուկ բաժնին մէջ (Էջ 50) եւ այստեղ պիտի չկրկնուի:



ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻՏԵՐ

Պլոտինոս (յուն.՝ Πλωτίνος, 205 – 270 թ.), ո՛չ մէկ տեղեկութիւն փոխանցած է իր ծնողքին, Նախահայրերուն կամ ընտանեկան պարագաներուն մասին: Երբեք չէ յիշած իր ծննդավայրը եւ ծննդեան թուականը: Ան չէ նշած նաեւ իր ծննդեան տարեդարձները: Նոյնիսկ թոյլ չէ տուած որ իր նկարը կամ քանդակը պատրաստուի, որովհետեւ, իր բացատրութեամբ՝ անձի մը մարմինը պատճենն է իր ոգեկան անհատականութեան եւ անհեթեթ ու անհարազատ պիտի ըլլայ՝ այս պատճենէն արուեստական պատճեն մը պատրաստել: Իր բառերով, ան պարզապէս «կ'ամչնար մարմնի մը մէջ ըլլալուն համար»: